

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԿԱՆԵՐԻ ՎԵՐԱԿՈՆԿՐԱԿՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ»

ՀՀ կառավարությունը որոշել է «Արմենիա վայն» ՍՊԸ-ի կողմից ներմուծվող 300 մլն դրամը գերազանցող արժեքով ապրանքների ԱԱՀ վճարման ժամկետը հետաձգել մինչև 2017 թ. մարտի 1-ը: Գործարանը հիմնադրվել է 2008 թվականին: 2010 թ.-ից սկսած՝ արտադրում է գինի, որը՝ բացի ներքին շուկայում սպառվելուց, նաև արտահանվում է: Հիմնադրման օրվանից մինչ օրս, ընկերությունում կատարվել է մոտ 10 մլրդ դրամի ներդրում: Այժմ «Արմենիա վայնը» կառուցում է փոփոխ գինու (շամպայնի) արտադրամաս, որի սարքավորումների ներմուծման ժամանակ ԱԱՀ գումարի վճարումը՝ կառավարության որոշմամբ, հետաձգվել է երեք փարով: Ներդրումային նոր ծրագրով Արագածոտնի մարզում կառուցվում է կոնյակի արտադրամաս, որը լինելու է խաղողի վերամշակումից մինչև պարարտի կոնյակի թողարկման համար անհրաժեշտ նորագույն սարքավորումների և տեխնոլոգիաների մի ամբողջ համալիր: Կատարվելիք 2.57 մլրդ. դրամի ներդրման շնորհիվ, հնարավոր կլինի արտադրանքի ծավալը հասցնել փարեկան 4.7 մլրդ դրամի և ընդլայնել արտահանման ծավալը: Քսան նոր աշխատողների միջին աշխատավարձը կհասնի 188 հազար դրամի:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ՝ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքային այցով օրերս Արմավիրի մարզում էր ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը: Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի, արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի և Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի ուղեկցությամբ, Տիգրան Սարգսյանը նախ՝ այցելել է Արշալույս և Ակնալիճ համայնքների մերձակայքում գտնվող հակակարկրային կայան՝ ծանոթացել վերջինիս աշխատանքներին:

Վարչապետը տեղեկացել է, որ Արմավիրում ներդրվում է հակակարկրային կայանների երկրորդ շարքը: ՀՀ պետությունը հարկազանց միջոցների շնորհիվ ձեռք է բերվել 80 նոր հակակարկրային կայան, որից 50-ը կտեղադրվի Արմավիրի մարզում՝ դրանց թիվը հասցնելով 161-ի: Արդյունքում՝ կբարձրացվի հնարավոր կարկրից պաշտպանվածության արդյունավետությունն ու հուսալիությունը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀՈԳՍԸ՝ ՈՒՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Վերջերս Աժ նախագահ Հովիկ Աբրահամյանը, Աժ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի անդամների, Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի և պաշտոնատար այլ անձանց ուղեկցությամբ, այցելել էր Արմավիրի մարզ: Աժ նախագահի առաջին կանգառն Արշալույս համայնքն էր:

Հովիկ Աբրահամյանը հանդիպել է խաղողի այգիներում աշխատող գյուղացիների հետ, համայնքի բնակիչների հետ զրուցել և հետաքրքրվել է նախորդ փարով կարկրահարության ժամանակ գյուղացիներին փրամարված աջակցության և արդյունքների վերաբերյալ: Գյուղացիները խորհրդարանի ղեկավարին հավաստիացրել են, որ աջակցությունը որոշակիորեն լուծել է իրենց խնդիրները:

Հ. Աբրահամյանը հետաքրքրվել է նաև խաղողի մթերման հետ կապված խնդիրներից: Գյուղացիները հավաստիացրել են, որ վերամշակող ընկերությունների հետ կնքվել են պայմանագրեր և մթերման հետ կապված խնդիրներ չկան: Արշալույս համայնքում գյուղացիներին մրահոգել է վնասաբույս ցեղերի փարածվածությունը, որոնք լուրջ վնաս են հասցնում բերքին՝ հանդիսանալով վարակի աղբյուր: Գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը նշեց, որ միջոցներ կձեռնարկվեն՝ մեղմելու ցեղերի հասցրած վնասը:



Յոսո ԳԱՀԿ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՂՆԴՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Հանս Հորբախին: Ընդունման ընթացքում պարտախանային պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, նախարարը հայտնեց, որ համապետը ջանքերով հայ-հոլանդական հարաբերությունները, մասնավորապես՝ գյուղատնտեսության բնագավառում, կհասցվեն զարգացման նոր մակարդակի:

Դեսպան Հորբախը պարտախանային հայտնեց, ըստ ամենայնի, աջակցել Հայաստանի և Նիդերլանդների Թագավորության գյուղատնտեսության նախարարությունների միջև կապերի սերտացմանը և նշեց, որ հայ-հոլանդական հարաբերությունները գյուղատնտեսության բնագավառում զարգացման մեծ հեռանկար ու ներուժ ունեն:

Այնուհետև, իյուրի խնդրանքով, նախարարը հանկիճ ներկայացրեց ոլորտի ներկա վիճակը, զարգացման միտումներն ու ռազմավարական ծրագրերը: Առաջնահերթությունների շարքում նախարարը ներկայացրեց հողերի լիարժեք և արդյունավետ մշակման, գյուղատնտեսական կոոպերացիայի համակարգի ներդրման, սննդամթերքի անվտանգության կարողությունների ուժեղացման, անասնաբուժության և փոխմային գործի բարելավման, սերմարտադրության զարգացման հարցերը: Նա հարկադարձ կարևորեց ջերմոցային տնտեսությունների զարգացման հոլանդական առաջավոր փորձի ուսումնասիրումն ու կիրառումը մեզանում՝ ակնկալելով հոլանդացի մասնագետների աջակցությունը: Հիմնավորելով հարցի անհրաժեշտությունը՝ նախարարը ցանկություն հայտնեց այս փարի Նիդերլանդների Թագավորությունում կազմակերպել գյուղատնտեսության հարցերին նվիրված բիզնես-ֆորում:

Դեսպան Հորբախը նշեց, որ Հոլանդիայի կառավարությունը պարտախանային և շարունակել համագործակցությունը Հայաստանի հետ: 2014 թվականի ամռանը Նիդերլանդների էկոնոմիկայի նախարարությունը սկսելու է ֆինանսավորել «Մասնավոր սեկտորի նախաձեռնություն» թեմայով նոր ծրագրեր: Ուստի և՛ պարտախանային և՛ պարտախանային քննարկել ներկայացված ազդեցությունը ոլորտին վերաբերող ցանկացած ծրագիր:

Հանդիպման ընթացքում նախարար Սերգո Կարապետյանն անդրադարձավ նաև Մաքսային միությանը Հայաստանի անդամակցելուն:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՈՒՈՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, «Գյուղմթերք արտադրող կին հերոս-2014» ազգային մրցանակաբաշխության շրջանակում, պարգևատրել ու նվերներ է հանձնել 20 կանանց՝ ոլորտում ակտիվ գործունեության և ակնառու հաջողությունների համար: Գյուղատնտեսության նախարարը նշել է, որ անուրանալի է կանանց դերը Հայաստանի գյուղատնտեսական ոլորտում, որպես զբաղվածների 57 տոկոսը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ են: Գյուղատնտեսության ոլորտում ձեռքբերումները մեծապես կախված են կանանց քրտնաջան աշխատանքից:

Սերգո Կարապետյանը բացահայտեց հայկական պտուղ-բանջարեղենի համի գաղտնիքներից մեկը՝ բնակլիմայական պայմաններն ու արևի ջերմությունը:

Կանայք իրենց սերը, հոգու ջերմությունը փախչա են հողին, և դրանով մեր հողն ավելի է հարստանում, ու մեր արտադրանքն ավելի ջարդր և համեղ է լինում»,- նշել է Ս. Կարապետյանը:

ՕԶՍՖԱՄ հայաստանյան գրասենյակի տնօրեն Մարգարիտա Հակոբյանը կարևորել է իրենց աջակցությամբ գյուղատնտեսական 20 կոոպերատիվների ստեղծումը, որոնցից 6-ը՝ կանանց մասնակցությամբ: «Միջոցառման հիմնական նպատակն էր՝ ներկայացնել այն կանանց, ովքեր ամենօրյա հերոսական աշխատանքով արտադրում են առաջնահերթ անհրաժեշտությունները ներկայացնող պարենամթերք և խթանում տեղական արտադրությունը»,- ասել է նա՝ հավելելով, որ միջոցառումը նպատակ ունի խթանել ֆերմերներին և փրամարդրել հարթակ՝ իրենց հաջողություններն ու խնդիրները ներկայացնելու համար:

Հայաստանում Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Քեթրին Լիչը շնորհավորել է կանանց՝ մաղթելով հաջողություններ, առողջություն և երջանկություն: Ըստ նրա՝ գյուղատնտեսությունը զարգացնելու նպատակով, դեսպանատնում շարունակելու է համագործակցությունն ՕԶՍՖԱՄ-ի հետ: «Մենք գիտենք, որ աջակցելով կնոջը, մեծացնելով նրա եկամուտները, նպաստելով նրա աշխատանքային հաջողություններին՝ մենք նպաստում ենք նաև ընտանիքի ամրապնդմանը»,- ասել է Ք. Լիչը:

1

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ՝ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այնուհետև Ակնալիճ համայնքում Տիգրան Սարգսյանը հանդիպել է խաղողի այգիներում գարնանային աշխատանքներ իրականացնող գյուղացիներին, գրուցել նրանց հետ՝ ծանոթացել առկա խնդիրներին, խոսել դրանց լուծման հնարավոր ուղիների մասին: Գյուղացիները շնորհակալություն են հայտնել վարչապետին՝ նախորդ տարվա ընթացքում տեղացած կարկառու աշխատանքների հետքեր սոցիալական ծրագրեր իրականացնելու համար, մասնավորապես՝ հողի հարկը, ջրի վարձը փոխհատուցելու, սերմացու, պարարտանյութ, դիզվառելիք, ինչպես նաև դրամական միանվագ օգնություն փրամադրելու համար:

Կառավարության ղեկավարը տեղեկացրել է, որ պետությունը շարունակելու է դիզվառելիքի, պարարտանյութի և սերմացուի սուբսիդավորման ծրագրերը, ինչի արդյունքում դրանք գյուղացիներին կտրամադրվեն շուկայականից էապես ցածր գներով:

Այնուհետև Տիգրան Սարգսյանն այցելել է Ակնալիճ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներից մեկի բնակարան և փոխանցել նվերներ: Վարչապետը հանձնարարել է աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ 4 ուսանող ունեցող ընտանիքին ներգրավել համապատասխան սոցիալական ծրագրերում:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀՈԳՍՆ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հաջորդ կանգառը՝ Գեղակերտ համայնքն էր: Այստեղ ևս գյուղացիները գրուցել են հոգի Աբրահամյանի հետ՝ ներկայացնելով բնակավայրի հիմնախնդիրները: Գյուղն ունի ջրի, գազի, ճանապարհների խնդիրներ: Բնակիչները նշեցին, որ համայնքը տարակտոր չունի: Հոգի Աբրահամյանը հավաստիացրեց, որ առաջիկայում նշված խնդիրները կուսումնասիրվեն և կքննարկվեն:

Վերականգնման կարիք ունի Գեղակերտ գյուղի մշակույթի տան տանիքը: Խորհրդարանի ղեկավարը խոստացավ այս հարցում ցուցաբերել աջակցություն:

Արմավիրի Արագած համայնքում հոգի Աբրահամյանը ծանոթացել է ջերմոցային տնտեսությունների աշխատանքներին: Համայնքն ունի մոտ 150 հա ջերմոց, որտեղ հիմնականում աճեցվում են թարխուն, կարտոֆիլ, կաղամբ: Գյուղմթերքը հիմնականում արտահանում են Ռուսաստանի Դաշնություն և Վրաստան: Ազգային ժողովի նախագահն այստեղ ևս ծանոթացել է գյուղի խնդիրներին, խոսել բնակիչների հետ: Արագած համայնքում գյուղացիների հետ համարեցնելով նրանց աճեցրած բերքից՝ հոգի Աբրահամյանը բոլորի ընտանիքներին լիություն է մատուցել և նշել, որ իշխանությունները մշտապես լինելու են գյուղացու կողքին, փորձելու են թերևս անհավանական հոգսեր:

Արագած համայնքում, ամփոփելով աշխատանքային այցն Արմավիրի մարզ, հոգի Աբրահամյանը նշել է, որ բոլոր խնդիրներն ուսումնասիրելու են և փորձելու են լուծումներ փոխել: Հաջորդ շաբաթ խորհրդարանում կիրավիրեն գարնանային նախապարաստական աշխատանքներին վերաբերող լուսամբեր:

ՈԼՈՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ



«Գյուղմթերք արտադրող կին հերոս-2014» մրցանակաբաշխությունն իրականացվում է չորրորդ անգամ: Այս տարի այն ներառում է ՀՀ բոլոր մարզերը և իրականացվում է Գյուղատնտեսական դաշինքի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ:

Միջոցառումն ուղեկցվեց գյուղատնտեսության ոլորտի հերոս կանանց կողմից արտադրվող գյուղմթերքների ցուցահանդես-վաճառքով և համարեցով: Միջոցառումն անցավ մասնակցել են նախարարությունների, միջազգային և տեղական կազմակերպությունների, ինչպես նաև ՕԵՍՖԱՄ-ի աջակցությամբ ստեղծված կոոպերատիվների ներկայացուցիչները: «Գյուղմթերք արտադրող կին հերոս» ծրագիրը մեկնարկել է 2012 թվականին՝ ՕԵՍՖԱՄ-ի «Աճեցնենք» (GROW) համաշխարհային քարոզարշավի շրջանակում:

ԿՆԵՎԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՏՐԱԿՏՈՐՆԵՐ ԱՐՅԱՍԻ ՀԱՄԱՐ

Օրերս, Հայաստանի «ՓՄՁ ՋԱԿ»-ի գրասենյակում, «Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի տնօրեն Աշոտ Բախշյանը և Հայաստանի «ՓՄՁ ՋԱԿ»-ի գործա-

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի աշխատանքային այցը Լոռու մարզ սկսվել է Սպիտակի թոչնաբուծական ֆաբրիկայից, ուր՝ մարզպետ Արթուր Նալբանդյանի ուղեկցությամբ, ծանոթացել է գերմանական Ժամանակակից սարքավորումներով կառուցվող ձեռնարկության շինարարության ընթացքին:



Նորակառույց 8 նոր թոչնաբուծիչից չորսում սարքավորումների տեղակայման աշխատանքներն արդեն ավարտված են, մյուսների տեխնիկական հանդերձավորումը կսկսվի օրերս: Տարեկան երեք հազար տոննա թոչնաբուծի արտադրական հզորություն ունեցող թոչնաֆաբրիկան մարզի բնակչության համար կապահովի 200 նոր աշխատատեղ:

Նախարարի այցի հաջորդ կանգառը բազմաբնույթ արտադրական գործունեություն ունեցող Վանաձորի «Թալգրիգ» ՍՊԸ-ն էր, որը զբաղվում է ցորենի ներմուծմամբ, այլուրի, մակարոնեղենի, հրուշակեղենի, լավաշի արտադրությամբ, ինչպես նաև մանրածախ և մեծածախ առևտրով: Ընկերության արտադրական հզորությունների աճը հնարավորություն կընձեռի մինչև տարեկան աշխատողների թիվը 90-ից հասցնել 170-ի:

Թե՛ թոչնաֆաբրիկայում, թե՛ «Թալգրիգում» նախարարը ծանոթացել է աշխատակիցներին հուզող խնդիրներին, խոստացել հնարավորինս աջակցել վերջիններիս կարգավորմանը: Օրվա երկրորդ կեսին նախարարը մարզպետի հետ մասնակցել է համայնքների

ղեկավարների, ֆերմերների, անտառային տնտեսության աշխատողների, մարզի ագրարային ոլորտին առնչվող մասնագետների հետ հանդիպում-խորհրդակցությանը: Ելույթում նախարարն ամփոփիչ անդրահարձել է 2013 թվականին, հաջողված ու արդյունավետ համարելով այն հանրապետության և Լոռու մարզի համար, խոսել պետական օժանդակման ծրագրերի մասին:

Նախարարը լավատեսորեն է արտահայտվել ընթացիկ տարվա խնդիրների իրականացման մասին, նշելով որ հանրապետության նախագահի հանձնարարությամբ, պետական օժանդակման ծրագրերը շարունակական են լինելու, գյուղացին կրկին մատչելի գներով ձեռք է բերելու սերմացու, պարարտանյութ ու դիզելային վառելանյութ, ինչը հնարավոր է դարձնելու կրկին նախորդ տարվա ձեռքբերումները: Նշված ծրագրերից նա առանձնապես կարևորել է «Համայնքների

գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որով մարզի 9 համայնքներում հիմնադրված արտոգտաբարձողների սպառողական կոոպերատիվները կարճ ժամանակում հասել են որոշակի հաջողությունների: Ընթացիկ տարում նախատեսվում է խնայված միջոցների հաշվին, մարզի և մի քանի համայնքներ ընդգրկել նշված ծրագրում:

Այնուհետև նախարարը, նախորդ տարվա լավ աշխատանքի ու բարձր արդյունքների համար, «Գյուղատնտեսության նվաճումների» ոսկե մեդալներով պարգևատրել է Ֆիդելիտոլ համայնքի ղեկավար Ալեքսեյ Նովիկովին, «Բողոյան» ՍՊԸ-ի տնօրեն Զոն Պողոսյանին և Վարդաբուր համայնքից ֆերմեր Վռամ Գյուլաբյանին: Մարզի գյուղատնտեսության ևս 10 առաջավորներ արժանացել են գյուղատնտեսության նախարարության շնորհակալագրերի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանն օրերս ընդունել է «Հայաստանի մանուկներ հիմնադրամ» բարեգործական կազմակերպության պատվիրակությանը՝ հիմնադիր և խորհրդի արձակուրդի Կարո Արմենի գլխավորությամբ:

Ա. Գևորգյանը բարձր գնահատեց հիմնադրամի կողմից համայնքներում առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները: Հիմնադրամը ներկայումս համայնքային զարգացման ծրագրեր է իրականացնում Արմավիրի և Արագածոտնի մարզերի Բաղրամյանի և Թալինի տարածաշրջանների 15 գյուղական համայնքում:

Փոխվարչապետը տեղեկություններ է ներկայացրել

վերջին տարիներին կառավարության կողմից մարզերում իրականացվող ծրագրերի մասին՝ մասնավորապես նշելով, որ 2011-2013թթ. լրացուցիչ 41,3 մլրդ դրամ է հատկացվել չորս հրապառ ծրագրերի իրականացման համար, ներկայումս նախապարաստվում է հիվանդանոցի ծրագիրը: Նա նաև տեղեկացրեց, որ կառավարությունը քայլեր է ձեռնարկում Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը՝ որպես Տարածքային զարգացման հիմնադրամ վերականգնակերպելու ուղղությամբ: Ակնկալվում է, որ նոր հիմնադրամը կարևոր դեր կունենա համայնքների զարգացմանը նպաստելու աշխատանքներում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ «Հայաստանի

նի մանուկներ հիմնադրամը» կհամագործակցի Տարածքային կառավարման նախարարության հետ՝ իրականացվելիք ծրագրերի ուղղություններն ու շահառու համայնքներին որոշելու հարցում: Փոխվարչապետը նշել է, որ կառավարությունը կարևորում է նաև սահմանամերձ համայնքներում զարգացման ծրագրերի իրականացումը, և առաջիկա տարիներին մեծ ուշադրություն է դարձվելու նշված համայնքներում խնդիրների լուծմանը:

Կարո Արմենն իր հերթին կարևորեց համայնքներում զարգացման ծրագրերի իրականացումը, ինչը հնարավորություն կտա տեղերում բարելավել սոցիալ-տնտեսական վիճակն ու բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

դիր տնօրեն Վարազդատ Կարապետյանը ստորագրեցին տրակտորների առքուվաճառքի պայմանագիր: Փաստաթղթի համաձայն՝ 40 տրակտոր շուրջով կուղևորվի դեպի Արցախ՝

ֆերմերներին լիզինգային կամ ուղղակի վաճառքով տրամադրելու համար: Շուրջով հայկական երկրորդ պետություն կուղևորվեն նաև տրակտորներին կից սարքավորումներ:

Անցած տարի Արցախ է տարվել 20 տրակտոր:

Տրակտորները Հայաստանի «ՓՄՁ ՋԱԿ»-ն Արցախին է տրամադրում ինքնարժեքով:

ՄԵՄԻՆԱՐ

ՀՈՂԱԳՈՐԾԸ ՈՐՈՇ ԶԱՓՈՎ ՆԱԵՎ ԳԻՏՆԱԿԱՆ Է

Վերջերս «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը Եղեգնաձորում կազմակերպել էր հանդիպում-սեմինար: Այն նվիրված էր գյուղատնտեսական շաղկապը երկու թեմաներին՝ «Պրոդպարու ծառերի էր և ձևավորում» և «Տնկարանային փոխառությունների հիմնում»:



Սեմինարին մասնակցում էին «Սյունիք» ԲՀԿ գյուղատնտեսական ոլորտի աշխատակիցները, Վայոց ձորի ԳԱՄԿ-ի մասնագետներն ու խորհրդատուները, ինչպես նաև «Սյունիք» ԲՀԿ կողմից իրականացվող 2014 թ. համայնքային զարգացման ծրագրի Վայոց ձորի 7 շահառու համայնքների ֆերմեր-խորհրդատուները: Յուրաքանչյուրը համառոտ ներկայացրել է իր անցած ուղին, կիսվել ունեցած դժվարությունների և ձեռքբերումների մասին: Չիվա համայնքի ֆերմեր Յմայակը ՀՀ-ում ընկուզի պատվաստի արվեստին տիրապետող մի քանի հմուտ վարպետներից մեկն է. ունի տնկարանային տնտեսություն և խնձորի այգի, որի համար էլ գյուղացիները նրան տվել են «Մարտին ապեր» անունը: «Դեռ դպրոցում ուսանելու տարիներին մի գյուղատնտեսական գործույթ ընկավ ձեռքս՝ պատվաստի և տնկանյութերի վերաբերյալ. այդ օրվանից կյանքս կապվեց հարազատ հողի հետ», - պատմում է Յմայակը: «Փոքրուց սիրել եմ հողը և արդյունքի հասել», - այսպես է արտահայտվել Ռինդ համայնքի ֆերմեր Աղվանը: Նա ևս իր կյանքի ընթացքում ուսումնասիրել է պատվաստի տեխ-

նիկան, հիմնել Արեմի սորտի խաղողի այգի և տարիների ընթացքում ձեռք բերել տնկիների լայն տեսականի: Նրա խոսքերով՝ ֆերմերները նաև գիտնականներ են, որովհետև գործնականում ուսումնասիրություններ կատարելով և փորձեր իրականացնելով՝ նրանք դառնում են նորամուտությունների հեղինակներ: «Մտել եմք հողի մեջ և սիրել հողը», - այսպես է բնութագրել իրեն Գետափ համայնքի ֆերմեր Սուրիկը, ով ունի տնկարանային տնտեսություն և զբաղվում է տնկիների արտադրությամբ: Ողջունելի փաստ էր, որ սեմինարին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև երիտասարդ ֆերմերները, ովքեր արդեն իրենց գտել էին գյուղատնտեսության մեջ և հպարտորեն պատմում էին այդ մասին: Իսկ գյուղատնտես էղվարդը համատեղում է այդ զբաղվածությունը՝ ներկայացնելով Թառաթումբ համայնքը, որտեղ դպրոցում օպերատոր է աշխատում, մինչև նրան ժամանակ հմտանում գյուղատնտեսության մեջ:

Ֆերմերներից մի քանիսը կիսեցին իրենց կարծիքներն ու տեսակետները՝ պատվաստի ժամկետների, եղանակների, ինչպես նաև տնկիների առանձնահատկությունների վերաբերյալ:

Սեմինարավար Արամայիս Հակոբյանը ներկայացրեց նաև ՀՀ-ում արդեն շրջանառվող ցածրած ծառատեսակների բերքատվության և այլ առանձնահատկությունների մասին և խորհուրդ տվեց ֆերմերներին դրանք տնկել և համեմատություններ անցկացնել մեր ավանդական տեղական սորտերի հետ:

Ամփոփելով սեմինարը՝ ֆերմերները նշեցին, որ ՀՀ-ում իրացման շրջանակներն ու հնարավորություններն ապագայում ավելի կընդարձակվեն, և նրանք կկարողանան իրենց մշակության տարածքները զգալի չափով ավելացնել և հեշտությամբ իրացնել արտադրանքը:

Ա. Գրիգորյան Վայոց ձորի ԳԱՄԿ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վերջերս Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, Tempus IV (La MANCHE) «Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում» ծրագրի շրջանակներում, անցկացվեց սեմինար:

Ծրագրի հիմնական նպատակն է՝ խթանել բարձրագույն կրթության արդիականացումը՝ մասնակից բուհերում ղեկավարման և կառավարման կարողությունների կարգաբարձման, համապատասխան շահագրգիռ կողմերի միջև բարձրագույն կրթության բարեփոխումներին միաված արդյունավետ երկխոսության խրախուսման, բուհերում որոշումների կայացման գործընթացում ուսանողների ակտիվ ներգրավվածության ապահովման միջոցով:

«ՀԱԱՀ-ի ուսումնական ծրագրերը, մարտահրավերները և կիրառումը» գեկույցով հանդես եկավ Ուսումնամեթոդական կենտրոնի փնթեյն, պրոռեկտոր Սմբատ Դավեյանը, իսկ «Բարձրագույն կրթության կառավարման համակարգում ուսանողների դերի բարձրացումը Բուխարայի գործընթացի լուսախներք» գեկույցը ներկայացրեց ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Թագուհի Աբրահամյանը: Հանդիպմանը ներկա էր նաև «Տեմպուս» ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, ով ներկայացրեց ծրագրի ընձեռած հնարավորությունները: Նշենք, որ «La MANCHE» կոնսորցիումը 29 հասարակությունների՝ արևելյան հարևանության երկրների 23 բարձրագույն ուսումնական հասարակությունների, ԵՄ 5 բարձրագույն ուսումնական հասարակությունների և Միացյալ Թագավորության 1 թիվ 1 գյուղատնտեսական ընկերության համագործակցության արդյունք է: Կոնսորցիումում ներառված են 10 երկրներ, որոնցից 5-ն՝ Արևելյան գործընկերության (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա), իսկ 5-ը՝ եվրոպական երկրներից (Մեծ Բրիտանիա, Բուլղարիա, Ֆրանսիա, Հունաստան, Պորտուգալիա):

www.anau.am

ԱՄՓՈՓՈՒՄ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԺՈՂՈՎ

Վերջերս Ծաղկաձորի Գործերի փանջը, փեղի է ունեցել «Հեյֆեր Հայաստանի» ծրագրերի փարեկան համաժողովը՝ «Հեյֆերի դերը հայաստանյան գյուղի և գյուղատնտեսության զարգացման գործում» խորագրով: Միջոցառմանը ներկա են եղել ավելի քան 140 մասնակիցներ՝ այդ թվում ՀՀ գյուղատնտեսության նախարարության և նրա ծրագրերի

իրականացման գրասենյակի պատասխանատու աշխատողներ, «Հեյֆեր Հայաստանի» համայնքային ծրագրերի իրականացնողներ, գյուղատնտեսական կոոպերատիվների նախագահներ, համայնքային առաջնորդներ և գործընկերներ: Համաժողովը նվիրված էր «Հեյֆեր Հայաստանի» ծրագրային ձեռքբերումներին և դրանց հետագա զարգացումներին: Մասնակիցներին ներկայացվել են նախորդ տարվա ընթացքում Հեյֆերի գործունեությունը, կազմակերպության աշխատանքային սկզբունքներն ու

մոտեցումները: «Հեյֆեր Հայաստանի» ծրագրերի մասնակիցներին ներկայացվել է նաև E-Agro գյուղատնտեսական վիրտուալ շուկան: Այնուհետև կայացավ նիստը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ԳԾԻԳ գրասենյակի հետ համատեղ իրականացվող ՀԳՈՎՄ (Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն) ծրագրի մեկ տարվա արդյունքներին և ծրագրի իրականացմանն առնչվող առկա խնդիրների վերաբերյալ:

Հ. Չաղարյան

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

Մեղվանցում վաղ գարնանային աշխատանքների հիմնական նպատակն է՝ վերացնել մեղուների ձմռան ընթացքում մեղվափեթակներում առաջացած անցանկալի երևույթները, սպեղծել նպաստավոր պայմաններ՝ մեղվանցներում ուժեղ մեղվաընկերանքների աճեցման և զարգացման համար, ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի արդյունավետ օգտագործվի գլխավոր մեղրաբերը:

Ցածրադիր շրջաններում փետրվարի վերջին, նախալեռնային գոտում մարտի առաջին տասնօրյակում, լեռնային գոտում մարտի վերջերին ավելի հաճախ պետք է հեկտել ձմեռող մեղվաընկերանքների վարքագծին: Եթե ձմեռանցում մեղվաընկերանքներն անհանգիստ են, աղմուկ են, անհրաժեշտ է նրանց դնել դրսում, նույնիսկ, եթե եղանակը նպաստավոր չէ մաքրման թռիչքի համար և պարզել պարճառները: Ուժեղ մեղվաընկերանքների մոտ դա կարող է լինել թույլ օդափոխության, կերապաշարի բացակայության և այլ պարճառներով: Հարկադրված դուրսը դնելու ժամանակ նրանց պետք մաքրում են ձնից, ծածկում ծղոտով, երբ չկա քամի և օդի ջերմաստիճանը սրվելու 12 աստիճանից ցածր չէ: Դուրս են բերում վաղ առավոտյան և մինչև կեսօր աշխատանքները պետք է ավարտված լինեն: Մեղվաընկերանքները պետք է տեղադրել 25 սմ բարձրությամբ պարավանների վրա: Մեղվանցը պետք է ապահովված լինի ջրով, ինչպես նաև աղաջրով (1 գդալ աղ՝ մեկ դույլ ջրին): Առաջին հերթին ապահովում են կերապաշարով, ցանկալի է փայլ պահեստային մեղրահացեր մեղրով կամ կանդիով, որպեսզի մեղուներն ավելորդ էներգիա չծախսեն և ժամանակից շուրջ չծերանան: Ցանկալի



է՝ կանդիին ավելացնել ծաղկափոշի: Անհրաժեշտ է կատարել բների խտրամաններ՝ հանելով ավելորդ մեղրահացերը՝ փաթեցնել, իսկ թույլ մեղվաընկերանքներն ապահովել երկկողմանի ջերմությամբ, անմայր մեղվաընկերանքները միացնել համեմատաբար թույլ մեղվաընկերանքների:

Երբ օդի ջերմաստիճանը 16-18° C-ից բարձր է, ապա պետք է կատարել վարրոպոզ հիվանդության դեմ պայքարի միջոցառումներ՝ օգտագործելով ֆունիսան, ապիդեզ, կիպրոտադեզ, ամիպոլ և այլ ակարիցիդ պարապարոկներ՝ կախելով այն մեղվաընկերանքի բնում: 6 շրջանականց մեղվաընկերանքին՝ մեկ ժապավեն, իսկ մինչև 10-12 շրջանականցին՝ 2 ժապավեն: Առաջինը՝ 2-րդ և 3-րդ մեղրահացերի կենտրոնում, իսկ երկրորդը՝ 7-րդ և 8-րդ շրջանակների մեղրահացերի արանքում թողնելով մինչև մեկ ամիս:

Այդ ընթացքում, եղանակները տարբերակելու զուգընթաց, կատարել նոգեմարոզ, ամբիպոզ պարապարոզ հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ աշխատանքներ և, համաձայն հրահանգի՝ օգտագործել նոգեմարոզ, նոգեմարոջ՝ յուրաքանչյուր 20 լիտր շաքարաջրին՝ 5 գրամ, յուրաքանչյուր մեկ պարոզ զանգված մեղվի համար՝ 100 գրամի չափով:

Մարտի վերջին, ապրիլի կեսերին, բուժկանխարգելիչ նպատակով, փոխափային հիվանդությունների դեմ փայլ շաքարային օշարակ՝ մեկ բաժին շաքարավազ, մեկ բաժին ջուր՝ 10 լիտր շաքարաջրին խառնելով 5 գրամ օքսիբակտրին կամ օքսիվիտ պարապարոզ: Լցնել այն պոլիէթիլենային բարակ պարկերի մեջ և դնել շրջանակների վերին ձողերի վրա՝ ծածկոցի փակ: Մեղուներն այն ծակում և մնում են:

Բոլոր դեղամիջոցները, դեղորայքով խառնված կանդին, գույքը, նյութերը, ինչպես նաև գրականությունը վաճառվում են «Մուլտի-Ագրո» ԳԱԿ-ի մեղվաբուժական խանութում: Գործում է նաև մոմի վերամշակման արտադրամաս, որն ապահովում է բարձրորակ և հիվանդություններից զերծ մոմաթերթ:

«Մուլտի-Ագրո» ԳԱԿ-ի ախտաբանական լաբորատորիայում մեղվապահների կողմից բերված մեղվի նմուշներն անվճար ստուգվում և փրվում են պարապարոզից՝ պայքարի միջոցառումներ կազմակերպելու համար:

Հ. Չաղարյան ՀՀ մեղվաբուժական ասոցիացիայի գլխավոր անասնաբույժ

ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԱԿՆՑ ՀԱՄԱՐ

Կարևորվում է կնոջ դերակատարությունը

«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2004 թ.-ին: ՀԵԿԱ-ի խնդիրներից են՝ նպաստել ՀՀ երիտասարդության, մասնավորապես՝ երիտասարդ կանանց ու աղջիկների առջև ծառայած խնդիրների լուծմանը, կանանց շրջանում ազգային արժեքների պահպանմանը, զբաղվածության մակարդակի բարձրացմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, աջակցել երիտասարդ կանանց և աղջիկների առողջության պահպանմանը, ինչպես նաև՝ փորձաշրջանում խաղաղության և կայունության ամրապնդմանը:



Ասոցիացիայի նախագահ Լիլիթ Ասաբյանը նշեց, որ իրենց նպատակն է՝ խթանել ՀՀ-ում երիտասարդ կնոջ դերի բարձրացումը՝ ՀՀ հասարակական, քաղաքական, քաղաքական, կրթական, մշակութային և այլ ոլորտներում: Ծրագրերն ուղղված են փորձաշրջանում երիտասարդ կանանց ու աղջիկների հիմնական խնդիրների լուծմանը: Լիլիթ Ասաբյանը կարևորեց՝ հարկապես կրթական ծրագրերը, դասընթացները, խորհրդատվությունները, քննարկումներն ու գործնական հանդիպումները: Որոշ ծրագրերում ասոցիացիան ապահովում է՝ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մասնակցությունը՝ բարձրացնելով հասարակական իրազեկության մակարդակը կանանց հիմնահարցերի վերաբերյալ: Համաձայն 2008-2012 թթ. ռազմավարության, ՀԵԿԱ-ի շահառուներ են հանդիսանում 13-ից 40 տարեկան երիտասարդ աղջիկներ և կանայք:

ուղղությամբ: ՀԵԿԱ-ն հիմնադրել է նաև «ՀայԿար» խումբը, որում ընդգրկված են գործազուրկ կանայք՝ Երևանից և Լոռու մարզից:

2005 թ.-ին ՀԵԿԱ-ն հանրապետությունում ստեղծել է Երիտասարդական կենտրոնների ցանց, որն իր մեջ առաջվ ներառում է երեք երիտասարդական կենտրոններ՝ Երևանում, Լոռու և Վայոց ձորի մարզերում: Կենտրոնների բազմաբնույթ ծառայություններից ամեն օր օգտվում են բազմաթիվ երիտասարդներ:

ՀԵԿԱ-ի անդամներն ու կամավորները, փորձի փոխանակման նպատակով, այցելություններ են ունենում աշխարհի տարբեր երկրներ, որպեսզի ձեռքբերած գիտելիքներն ու փորձը կիրառում են ՀԵԿԱ-ի ծրագրերի իրականացման ընթացքում:

Ազգային ժողովրդավարության ինստիտուտի հովանավորությամբ գործող Երիտասարդական և Կանանց խորհուրդների նախաձեռնությամբ իրականացվել է «Մաքուր համայնք» ակցիան, որը տեղի է ունեցել Նորավանք եկեղեցու հարակից տարածքում: Ակցիային մասնակցել է շուրջ 150 երիտասարդ՝ Երևանից և Վայոց ձորի մարզից: Ակցիան նպատակ էր հետապնդում՝ սերտացնել համագործակցությունը Երևանի և մարզային հասարակական կազմակերպությունների միջև, նրանց մասնակից դարձնել հասարակական ծրագրերին և համայնքային խնդիրների լուծմանը, բարձրացնել հասարակական կազմակերպությունների ներկայության մակարդակը ընտրատարածքներում, նպաստել երիտասարդ և կին առաջնորդների զարգացմանը, ստեղծել հասարակական կազմակերպությունների հզոր ցանց և արդյունավետ համագործակցություն՝ փորձեր խնդիրների շուրջ՝ համայնքիև հուզող խնդիրների շրջանակներում: ՀԵԿԱ-ի նախագահ Լիլիթ Ասաբյանը նշեց, որ համագործակցում են՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մի շարք կառույցների հետ՝ ՀՀ գյուղատնտեսության, բնապահպանության, մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների, Քաղաքացիական զարգացման համագործակցության հիմնադրամի, Ջինիշյանի հիշատակի հիմնադրամի, «Կին առաջնորդ» ֆորումի, «Հայաստանի համահայկական հիմնադրամի», ՕԲՏՖԱՍ-ի, վրացական «Դրոնի» ասոցիացիայի, ՀՀ-ում ԱՄՆ-ի, Հունաստանի, Կանադայի, Բրազիլիայի, Մեծ Բրիտանիայի դեսպանատների, Բրիտանական խորհրդի, Երիտասարդական կենտրոնների Եվրոպական ցանցի, Խաղաղության կորպուսի, Միջազգային համագործակցության գերմանական ընկերության, Վորլդ Վիժնի, Եվրոպայի խորհրդի և այլ կառույցների հետ:

ՀԵԿԱ-ն իր ծրագրերն իրականացնում է չորս հիմնական ուղղություններով՝ երիտասարդ կանանց առաջնորդություն և բիզնես զարգացում, ազգային և միջազգային փոխանակման ծրագրեր, ինչպես նաև ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի զարգացման խթանումը՝ երիտասարդ կանանց ներգրավվածությունն ընդլայնելու միջոցով: Բոլոր ծրագրերի նպատակն է՝ նվազեցնել գյուղաբնակ կանանց գործազուրկության մակարդակը և զարգացնել մարզային համայնքները:

Ձեռնբերեցության խթանման մասով՝ ՀԵԿԱ-ն իրականացնում է Երկու տիպի ծրագրեր. «Ծանոթացում բիզնեսի հետ»՝ 13-ից 18 տարեկան աղջիկների և «Սկսիր և զարգացրու քո բիզնեսը»՝ 18-ից 40 տարեկան կանանց համար: Այս ծրագրերն իրականացվում են միջազգային որակավորում ունեցող դասավանդողների կողմից:

Իր գործունեության հինգ տարիների ընթացքում ասոցիացիան իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք նպաստում են վերահիշյալ խնդիրների լուծմանը: Մասնավորապես՝ ՀԵԿԱ-ն, կանանց շրջանում գործազուրկության մակարդակը մեղմելու նպատակով, իրականացնում է ծրագրեր (հիմնել է կարի արտադրամասեր, իրականացնում է անձնական հմտությունների զարգացման դասընթացներ), մարզերում մշակութային կյանքն ակտիվացնելու նպատակով հիմնել է «Երիտասարդի թատրոն» ստուդիան, որը փիկնիկային ներկայացումներով ու օրախոսությամբ է պարզաբանում երեխաներին ու երիտասարդներին: Երիտասարդ կանանց՝ որպես երկրի լիիրավ քաղաքացիներ կրթելու համար, իրականացվում են կրթական, առողջապահական, բարեգործական ծրագրեր: Քայլեր են կատարվում նաև հայկական ընթանական ավանդույթները պահպանելու և ամրապնդելու

Լիանա Շախնազարյան

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՅՈՒՄ

Գյուղական զբոսաշրջության խթանում

«Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրն ուղղված է՝ միասնական ռեսուրսների հիման վրա, Սևծովյան ավազանի չորս երկրների (Հայաստան, Վրաստան, Թուրքիա, Բուլղարիա)՝ տնտեսական և սոցիալական զարգացման նպատակով, փորձաշրջանային համագործակցության ամրապնդմանը: Գյուղական զբոսաշրջության ցանցերի ստեղծման միջոցով հնարավոր է միասնական զբոսաշրջության զարգացման նախաձեռնություններն ու ավանդական արտադրանքն ավելացնել:



Օրերս, «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրի շրջանակներում, «Հեյֆեր Հայաստանը» հանդիպում էր կազմակերպել ՀՀ կառավարության պաշտոնատար անձանց և Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Ներկաներին ողջունելով «Հեյֆեր Հայաստանի» տնօրեն Անահիտ Ղազանջյանը՝ նշելով, որ ծրագրի արդյունքում, մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործման և փորձի փոխանակման միջոցով, կամրապնդվեն փորձաշրջանային համագործակցությունն ու կապերը: Ծրագրի հետագա քայլերի մասին ներկայացրել է PIRT (սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում) ծրագրի համակարգող Աննա Առաքելյանը: Ըստ մասնագետի՝ մեր փորձաշրջանն ունի բոլոր նախադրյալները՝ գյուղական տուրիզմի զարգացման համար, կարևորը՝ համագործակցության արդյունավետության ապահովումն է: «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից: Ծրագիրը սկսվել է 2013թ. Նոյեմբերին և կրկի 18 ամիս:

ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանը նշեց, որ ծրագիրը հնարավորություն կտա գյուղաբնակներին կապվել գյուղի հետ, նպաստել գյուղի զարգացմանն ու առաջընթացին:

Ծրագրի շրջանակներում կստեղծվեն ուսուցում ստացած և հմտություններ ունեցող՝ գյուղական զբոսաշրջության ոլորտում տեղական ծառայություններ մատուցողների և տուրիստական գործակալությունների ցանցեր, որոնք կմշակեն և կվաճառեն եզակի զբոսաշրջային արտադրանք՝ «Տարածաշրջանային այցելուի միասնական փաթեթ» («ՏՍՄ» փաթեթ): Այն կխթանի զբոսաշրջիկների ներհույսը փորձաշրջան և իր ներդրումը կունենա ներերկրային և ներտարածաշրջանային պետական կառույցների միջև՝ աննախադեպ համագործակցության հաստատման հարցում: «Կարևորը՝ փորձաշրջանային մակարդակով գյուղական զբոսաշրջության ոլորտում երկարապարհ արդյունքների ձեռքբերումն է», - շեշտել է ծրագրի համակարգողը: Հանդիպման ավարտին մասնակիցները քննարկեցին թեմային առնչվող հարցեր ու առաջարկություններ:

Լիանա Շախնազարյան

ՕՏԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աջակցության ծրագրեր

Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման գործում, մարզի ֆերմերային տնտեսություններին աջակցելու նպատակով, շուրջ երեք տարի է, ինչ իրականացվում են սերմնաբուծության և սերմնարտադրության, ինչպես նաև՝ դիզելային վառելանյութի և ազոտական պարարտանյութի մատչելի գնեցումը ձեռքբերման պետական աջակցության ծրագրերը:

Այս տարի, Արմավիրի մարզի գյուղացիական տնտեսություններին, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն նախապես ներկայացված հայրերի հիման վրա, պետության սուբսիդավորմամբ՝ որպես աջակցություն, հարկացվելու է 7000 տոննա ազոտական, 300 տոննա ֆոսֆորական և 200 տոննա կալիումական պարարտանյութ:

Ազոտական պարարտանյութի մեկ պարկի համար հողօգտագործող վճարում է 6000, ֆոսֆորականի և կալիումականի համար՝ 7000-ական դրամ:

Մարտի 12-ի դրությամբ, մարզ է ներկրվել և գյուղացիական տնտեսություններին է բաշխվել 2078 տոննա պարարտանյութ՝ շուկայականից 30-50% ցածր գնով:

Մարզի հողօգտագործողների կողմից հայր է ներկայացվել նաև 2000000 լիտր դիզելային վառելանյութի ձեռք բերման համար, որն ամբողջությամբ բավարարվել է: Նշված չափաքանակից 60000 լիտրն արդեն բաշխվել է հողօգտագործողներին՝ 1 լիտրը՝ 350 դրամով, որը շուկայական գնից ցածր է 30%-ով:

Ամբողջությամբ բավարարվել է նաև 18 տոննա գարու, 6,5 տոննա առվույթի և 0,6 տոննա եգիպտացորենի սերմացուների պահանջարկը: Գարձյալ շուկայականից անհամեմատ ցածր գնով գյուղացիական տնտեսությունները վճարել և ստացել են 12730 կիլոգրամ գարու և 5580 կիլոգրամ առվույթի սերմացու:

Սահականուշ Արդյան
Արմավիրի ԳԱՄԿ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ՝ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի երիտասարդ կանանց առցիսցիա» /ՅԵԿԱ/ հասարակական կազմակերպությունը, Եվրամիության ֆինանսավորմամբ, իրականացնում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը:



Օրերս, Լոռու մարզում, Ախթալա խմբի համար կայացավ Տեղական տնտեսական զարգացման /SSQ/ մոդելի արդյունքների ներկայացում: Ի դեպ՝ խումբն իր մեջ ներառում է նաև շրջակա՝ Շամլուղ, Այրում և Ճոճկան համայնքները: Ախթալայի քաղաքապետարանում հրավիրված միջոցառմանը մասնակցում էին համայնքների տնտեսական զարգացման շահառուներ, մասնավոր հատվածի, հասարակական-քաղաքական կազմակերպությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: Համայնքների մրցակցային առավելությունների հիման վրա մշակված սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող ծրագիրն իր մեջ ներառում է մարզի համար ռազմավարական նշանակություն ունեցող հանքարդյունաբերության, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտները:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին խմբի տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն ու հեռանկարները, համայնքների միջև առկա և հնարավոր տնտեսական կապերը: Փորձագիտական խմբի ղեկավար Ռշարուն Մարտիրոսյանը, ով իրականացրել է ծրագրի նշված փուլը, ներկայացրեց տեղական տնտեսական պատկերի վերլուծությունը: «Բնակչությունը, կարիքների բացահայտման և մրցակցային առավելությունների հիմքի վրա, ինքն է թելադրում, թե որ ճյուղերը կարող են լինել հեռանկարային և արդյունավետ»,- նշեց նա:



Ինչ վերաբերում է գյուղատնտեսությանը, ապա առաջնահերթությունը տրվում է մերձարևադարձային մշակաբույսերի և հատապտուղների մշակությանը, քանի որ մարզում առկա են նպաստավոր բնակլիմայական պայմաններ և անհրաժեշտ ներուժ:

Մշակված մոդելի հիման վրա, կանանց համար կազմակերպվելու են ձեռներեցությունը խթանող ուսումնական և տեղեկատվական դասընթացներ, քննարկումներ, իսկ ձեռնարկատիրական ծրագրերի իրականացման նպատակով, շահառուներին տրամադրվելու են ֆինանսական միջոցներ:

«SSQ» մոդելի զարգացումը կարևոր քայլ է գյուղական բնակավայրերում զարգացման ուղիները գծագրելու ճանապարհին: Այդպիսով, համայնքները հնարավորություն կունենան անցնելու սոցիալ-տնտեսական առավել բարենպաստ փուլի»,- ասաց ՅԵԿԱ նախագահ Լիլիթ Ասատրյանը:

Ծրագիրը, որի գործընկերներն են CISP կազմակերպությունը, Լոռու մարզպետարանը և Վանաձորի քաղաքապետարանը, մեկնարկել է 2013 թ. մայիսին և կավարտվի 2016 թ.-ին: Ծրագրից սպասվելիք արդյունքը սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումն ու կայունացումն է:

Նեկի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԸՆԴԱՅՆԵՆՔ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՄԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԻՆ

Ներկայումս հանրապետության կերտարածություններում ընդգրկված է կերային մշակաբույսերի խիստ սահմանափակ քանակություն՝ 3-5 բուսատեսակ, որոնք հիմնականում բազմամյա խոտաբույսեր են՝ առվույր, կորնզան: Մինչդեռ աշխարհում կերտարածության մեջ հայտնի են հարյուրավոր բարձրարժեք միամյա և բազմամյա մշակաբույսեր, որոնք, ունենալով կենսաբանական բարձր հատկանիշներ, այս կամ այն կերտարածակի ստացման աղբյուր են ծառայում: Դրանց տեսակային կազմն ու տարածվածությունը որոշվում է՝ էլեկտրոնային բնակլիմայական պայմաններից և կերի ու կերտարածակների նկատմամբ ունեցած պահանջարկից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Ագրոլուստ» թերթը կանդադառնա կերային մի քանի արժեքավոր մշակաբույսերի համառոտ բնութագրին ու մշակման տեխնոլոգիային, որոնք, բազմամյա ուսումնասիրությունների արդյունքներով, հանրապետության տարբեր հողակլիմայական պայմաններում ապահովում են բարձր արդյունավետություն և հաջողությամբ կարող են մշակվել կանաչ կերի, խոտի, խոտալյուրի, ինչպես նաև սիլոսի և սենածի պատրաստման համար:

Միամյա երեքնուկ կամ Շաբդար

Միամյա, թիթեռնաձողկավոր, 80-130 սմ բարձրությամբ խոտաբույս է՝ սնամեջ, պառկող ցողուններով: Երկրային է, խոնավասեր, որի թե՛ աշնան, թե՛ գարնան, և թե՛ ամառային ցանքերից ստացվող սպիրակուցներով հարուստ կանաչ զանգվածն օգտագործվում է կանաչ կերի, խոտալյուրի, ինչպես նաև՝ բարձրորակ խոտ ստանալու համար: Մենդանյութերի պարունակությամբ, դրա խոտը չի գիշում առվույրի խոտին: Շաբդարի մշակությունը հնարավոր է հանրապետության գրեթե բոլոր տարածաշրջաններում և՛ կախված մշակության վայրի հողակլիմայական պայմաններից, տալիս է 1-3 հար: Միջանկյալ մշակաբույս է. հարթավայրային և նախալեռնային գոտու ջրով փառածըներում՝ մայիսի կեսերից մինչև վերջերը, հասնում է հասունացման՝ հեկտարից ապահովելով 300 և ավելի կանաչ զանգվածի բերք: Խոզանային ցանքի դեպքում (աշնանցան հացաբույսերի բերքահավաքից հետո), մինչև կայուն ցրտերը, ստացվում է մեկ լրիվ հար և ահուկ, իսկ հաջորդ գարնանն՝ արագ վերածից հետո, առաջացնում է փարթամ բուսածածկ՝ կանաչ զանգվածի բարձր բերքով: Արդյունքն էլ ավելի բարձր է լինում, երբ ցանքը կատարվում է կանգուն ցողուններ ունեցող որևէ այլ մշակաբույսի (գարու, տարեկանի, ցորենաշորայի, հլածուկի) հետ խառնելով:



Շաբդարը փարթամ աճ և արագ բերք է կազմավորում նաև խոնավությամբ համեմատաբար ապահով բարձրադիր շրջաններում: Այսպես՝ Լոռվա սարահարթի վաղ գարնան ցանքը տվել է երկու հար՝ հեկտարից ապահովելով 310-400 և կանաչ զանգվածի բերք: Շաբդարն անփոխարինելի մշակաբույս է կանաչ կոնվեյերում:

Շաբդարի համար լավ նախորդ են համարվում աշնանացան հացաբույսերն ու շարահերկ մշակաբույսերը: Լինելով թիթեռնաձողկավոր՝ այն լավ նախորդ է բանաջարկոտ ստանային և տեխնիկական մշակաբույսերի համար:

Աշնանը՝ խոր վարի տակ, անհրաժեշտ է հողը չափավոր սնուցել ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով (60-ական կգ/հա՝ ազդող նյութի հաշվով): Նախացանքային կուլտիվացիայի տակ հող է մրցվում նաև ազդողական պարարտանյութ (1 ց/հա) և հացահատիկային կամ խոտացան շարքացանով կատարվում համապարփած շարային ցանք. աշնանը՝ 16-18 կգ/հա, գարնանը՝ 14-15 կգ/հա՝ սերմի ցանքի չափաքանակով, 1,5-2 սմ խորությամբ:

Շաբդարի աշնանային ցանքը ձմռանը լավ է դիմանում, եթե կայուն ցրտերի վրա հասնելուց առաջ բույսերը կազմակերպում են լավ զարգացած տերևային վարդակ: Այդ իսկ պարճառով, անհրաժեշտ է ցանքը կատարել տվյալ վայրում աշնանացանի համար ընդունված լավագույն ժամկետից՝ 15-20 օր շուր: Հացազգի մշակաբույսերի հետ խառն ցանքերում ցանքը կատարվում է անջատ ձևով. սկզբում ցանվում է հացազգի բաղադրիչը (գարի, տարեկան, ցորենաշորա), սերմի ցանքի չափաքանակի 70 %-ի չափով, այնուհետև, լրիվ չափաքանակով, շարքերին ընդլայնական՝ 2-3 սմ խորությամբ ցանվում է շաբդարը:

Վեգետացիայի ընթացքում շաբդարն առանձնապես մեծ խնամք չի պահանջում, անհրաժեշտության դեպքում, կատարվում է ընդամենը 1-2 ոռոգում: Տերևային վարդակի առաջացման փուլում ձմեռած բույսերը վաղ գարնանը տալիս են վերած և 50-55 օր հետո՝ հասնում հնձային հասունացման (ծաղկման փուլ): Աշնան ցանքերում սերմի համար թողնվում է շաբդարի առաջին հարը, երբ գլխիկների մեծ մասը դեղնում են, իսկ խոնավությամբ առատ տարիներին (հատկապես՝ գարնան 2-րդ կեսին), սերմի համար լավ է թողնել երկրորդ հարը: Վերջինիս դեպքում առաջին հարը պետք է հնձել ավելի վաղ՝ մինչև ծաղկումը: Հեկտարից ստացվում է 6-8 ց սերմ:

Աշորա (տարեկան)



Աշորան հացազգիների (դաշտավունկազգիների) ընտանիքին պատկանող, լավ թփակալվող, 1,5 - 2 մ բարձրությամբ աշնանացան և գարնանացան միամյա մշակաբույս է, սակայն մշակության մեջ տարածված է հիմնականում աշնանացան ձևը: Աչքի է ընկնում բարձր ցրտադիմացկունությամբ և չորադիմացկունությամբ: Առանց ձյան ծածկույթի՝ աշնանացան աշորան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԸՆԴԱՅՆԵՆՔ ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱՔՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԻՆ

կարող է դիմանալ -35 -37°C, իսկ 20-30 սմ ձյան շերտի տակ՝ նույնիսկ -50°C առանձնահատուկ: Որպես կեր՝ օգտագործվում է թե՛ կանաչ զանգվածը, թե՛ հատիկը: Աշոտայի կանաչ զանգվածից պարարաստված խոտը, սիլոսը, սենածղ, խոտալուրը հրաշալի կեր են գյուղատնտեսական բոլոր կենդանիների համար. 100 կգ կանաչ զանգվածը պարունակում է 18, իսկ հատիկը՝ 118 կերային միավոր: Կերային արժեքն ավելի է մեծանում, երբ աշոտան մշակվում է աշնանացան վիճակի, ձմեռող ոլոռի, աշնանացան հլածուկի հետ: Աշնան ցանքն աճը դադարեցնում է, երբ օդի ջերմաստիճանը 5°C-ից նվազում է: Գարնանը՝ նույն ջերմաստիճանից սկսած, բույսերի աճը վերսկսվում է, և կարծ ժամանակում կարող է կուտակվել բավականին մեծ կենսազանգված: Բերքի ամենամեծ ձևավորումն սկսվում է բույսերի խողովակալայման փուլից և շարունակվում է մինչև հասկակալումը, որի ժամանակ բույսերում առկա է սննդանյութերի ամենամեծ պարունակությունը:

Աշոտայի բարձր ցրտադիմացկունության, չորադիմացկունության, ցածր ջերմաստիճանում ծլելու և վաղ զարնանից արագ աճ փառու ընդունակության շնորհիվ, այն կարելի է մշակել հանրապետության բոլոր հողակլիմայական հարթավայրային և մինչև բարձր լեռնային պայմաններում: Լեռնային և նախալեռնային բարձր շրջաններում այն մշակվում է որպես հիմնական, իսկ Արարատյան դաշտում՝ նախալեռնային գոտու ջրովի պայմաններում և հովտային ցածրադիր վայրերում՝ որպես աշնանացան միջանկյալ մշակաբույս:

Արդյունքները հավաստում են, որ նախալեռնային չոր փաստանային գոտու անջրդի պայմաններում, աշնանացան աշոտայի և վիկի խառը ցանքի կանաչ զանգվածի բերքը կազմել է 150-240, լեռնափաստանային գոտու ջրովի պայմաններում՝ 250-280, անջրդի պայմաններում՝ 150-250, մարգագետնափաստանային գոտու անջրդի պայմաններում՝ 180-245 գ/հա:

Աշոտան հողի նկատմամբ առանձնապես մեծ պահանջ չունի: Այն հաջողությամբ կարելի է մշակել սա-

կավ բերրի, ավազային, թեթև, ինչպես նաև՝ թույլ աղակալված հողերում: Աշոտայի համար լավ նախորդներ են՝ շարահերկ մշակաբույսերը, հատիկազուգեղենները, միամյա խոտաբույսերը:

Աշոտայի բերքատվությունը զգալիորեն բարձրանում է օրգանական և հանքային պարարտանյութերի կիրառման դեպքում: Որպես հիմնական պարարտացում, խոր վարի փակ պեղք է հող մրցնել 20-25 ք/հա գոմաղբ, 3-3,5 գ/հա սուպերֆոսֆատ և 1,5-2 գ/հա կալիումական աղ: Նախացանցային կուլտիվացիայի փակ անհրաժեշտ է հող մրցնել նաև 1 գ/հա ազոտական պարարտանյութ և հացահատիկային շարքացանով կատարել ցանք: Սերմի ցանքի չափաքանակը՝ կախված նպատակից (հատիկ, կանաչ զանգված), կազմում է 170-230 կգ/հա, սերմի 4-5 սմ թաղման խորությամբ:

Քարամրիկի և փոշեմրիկի դեմ պայքարելու համար սերմն անհրաժեշտ է ցանքից առաջ ախրահանել դիմիդենտով (100 կգ սերմին՝ 1 լ ջրում լուծելով 150 գր) :

Սերմի ցանքի չափաքանակը, խառը ցանքի դեպքում, վերցվում է բաղադրիչների մաքուր չափաքանակի 70% չափով:

Աշոտայի ցանքն առանձնապես մեծ խնամք չի պահանջում: Վաղ գարնանը դաշտը պեղք է սնուցել 1 գ/հա ազոտական պարարտանյութով և անմիջապես փոցիել: Խիտ բուսածածկի շնորհիվ, աշոտան կարողանում է ճնշել մոլախոտերին: Կանաչ զանգվածի բերքահավաքն անհրաժեշտ է կատարել բույսերի հասկակալման փուլի սկզբում: Բերքահավաքի ուղացումը կորուկ իջեցնում է կերի որակը: Ավելի վաղ հնձելիս (խողովակալայման փուլում), աշոտան փախի է առաք ախուկ, որը կարող է լավ արոտ ծառայել:

Ռ. Սահակյան, Մ. Միրզոյան
Մենթամբերի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն

Գ. Թովմասյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ՄԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՄԱԿ-ի «Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն» (ՊԳԿ-FAO) աջակցում է Հայաստանի բանջարային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմնաբուծության համակարգերի զարգացման գործում: Մշակվել է «Աջակցություն Հայաստանում բանջարային մշակաբույսերի սերմնաբուծության և սերմնաբուծության համակարգերի զարգացմանը» ծրագիրը, որը ֆինանսավորվելու է ՊԳԿ-ի կողմից և իրականացվելու է ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջոցով: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 459 հազար ԱՄՆ դոլար: Ծրագիրը ներկայացվել է հանրությանը:

ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը նշել է, որ բանջարանոցային մշակաբույսերի սերմնաբուծությունը մեր հանրապետության համար շատ կարևոր նշանակություն ունի. «Այն գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկն է՝ հատկապես հարթավայրում և նախալեռնային գոտում... Բուսաբուծության ոլորտի ցանկացած առանձին ճյուղի զարգացումը հնարավոր չէ պարկեցանել առանց սերմնաբուծության զարգացման: Իրականացվելիք ծրագրով լուծվելու են մի շարք կարևոր խնդիրներ: Գրանցից մեկը՝ մի շարք սարքավորումներով բանջարաբուսանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի ապահովումն է, ինչը հնարավորություն կտա ավելի բարձր արտադրողականություն և բարձրորակ սերմեր ունենալ, նաև հնարավորություններ ստեղծել շուկայա հանման համար»:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փոխնախարար (Բուսաբուծության) ներկայացուցիչ Ալեքսի Երևուհյանը ներկայացրել է բուսաբուծության և բույսերի պաշտպանության ոլորտում Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գործունեությունը: Անդրադառնալով ծրագրին՝ նա նշել է, որ սերմնաբուծությունն այսօր կարևորագույն ոլորտներից մեկն է: Կարևորելով Հայաստանում իրականացվելիք ծրագիրը՝ նա առաջարկել է մտածել հետագայում գենետիկ ռեսուրսների ազգային ծրագիր մշակելու ուղղությամբ:

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԵՂՎԱԳՆԱՅՆՆԵՐԻՆ



ՄԵՂՈՒՆԵՐԻ ՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Մեղուների վիրուսային հիվանդությունների դեմ պայքարը և կանխարգելիչ միջոցառումները մեր հանրապետությունում արտերային բնույթ են կրում:

Անհնար է արդյունավետ պայքարել վարակիչ հիվանդությունների դեմ առանց համալիր միջոցառումները ճիշտ և ժամանակին իրականացնելու:

Միայն բուժիչ դեղամիջոցների օգտագործմամբ, առանց արտաքին միջավայրում վարակիչ հիվանդությունների հարուցիչները ոչնչացնելու, հնարավոր չէ ունենալ առողջ մեղվանոց: Այդ հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր անասնաբուժասանիտարական միջոցառումներ: Միջոցառումների արդյունավետությունը կախված է նրանից, թե որքան լիարժեք է ժամանակին են վարակազերծվում անապահով մեղվանոցի ամբողջ կառույցները՝ փեթակները, մեղվամուկը, շրջանակները, գործիքները, ինչպես նաև մեղվանոցի փորածրը: Անհրաժեշտ է պլանային հակահամաճարակային միջոցառումներն իրականացնել ըստ արածաշրջանի, հակառակ դեպքում, վարակ կարող է ներթափանցել արտաքին միջավայրից՝ ծաղիկների, ծաղկափոշու, փեթակների, գործիքների միջոցով, որոնք ձեռք են բերվել անապահով փոխտնակներին:

Մեր հանրապետությունում մեղվաբուծությամբ զբաղվող մեղվապահները հիմնականում կանխարգելիչ միջոցառումներ իրականացնում են վարրոտագ, նոգեմատագ, ինվազիոն, ինչպես նաև որոշ վարակիչ հիվանդությունների դեմ հաշվի չառնելով վիրուսային հիվանդությունները:

Ելնելով այն փաստից, որ մեղուների հիվանդությունների կլինիկական նշանները միանման են, դժվարանում է դրանց ախտորոշումը, երբեմն էլ՝ սխալ ախտորոշման հետևանքով, իրականացվում է ոչ համապատասխան բուժում՝ այսինքն չեն պայքարում հիվանդության դեմ,

որով իրականում ախտահարվել են մեղուները: Օրինակ՝ մեղուները կարող են սողալ՝ ինչպես վիրուսային պարալիչների, այնպես էլ նոգեմատագի, վարրոտագի, սեպտիցեմիայի և տարբեր թունավորումների ժամանակ: Վիրուսային հիվանդությունները մեծ վնաս են հասցնում մեղվաբուծությանը: Թրթուրի պարկանման վիրուսի մեկ հիվանդ հարսնյակային ձևն ընդունակ է վարակել 3000 առողջ թրթուրների:

Վիրուսներով ախտահարվում են՝ ինչպես մեծահասակ մեղուներն, այնպես էլ հարսնյակային և թրթուրային ձևերը: Մեղուների հայրենի 20 վիրուսներից, որոնցից ոչ բոլորն են ախտածին, «Մուլտի-Ագրո» ՊԱԿ-ի լաբորատորիա բերված մեղուների հիվանդ նմուշներում հիմնականում հայտնաբերվել են թրթուրների պարկանման վիրուսային հիվանդության սուր և ջրոնիկ պարալիչներ. այդ փաստը կրկնակի անգամ հաստատում է, որ այդ հիվանդությունները բնորոշ են մեր աշխարհագրական գոտում: Պարկանման վիրուսային հիվանդությունը հաճախ գրանցվում է գարնանն ու ամառվա առաջին կեսին:

Քրոնիկ պարալիչը գրանցվում է փարվա բոլոր եղանակներին, իսկ սուրը՝ ձմռան վերջում, հաճախ էլ գարնանն ու ամառվա ընթացքում:

Մեղվանոցը վերը նշված հիվանդություններից զերծ պահելու համար անհրաժեշտ է ունենալ ուժեղ մեղվաղն-պահիչներ, թույլ չտալ փեթակների փառքայում, նրանց ապահովել անհրաժեշտ քանակությամբ սպիտակուցային և ածխաջրային լիարժեք կերերով՝ մեղրածաղկափոշային խյուսով, ծաղկափոշով:

Ներկայումս, վիրուսային հիվանդությունների համար՝ որպես կանխարգելիչ դեղամիջոց, առաջարկված է էնդոգլյուկին-ֆերմենտային պարարտանյութը, որը ստացվել է էնդոնուկլեազ և ռիբոնուկլեազա ֆերմենտների հիմքի վրա /Բարուսով Յ.Մ. 1992 թ./: Այն իրենից ներկայացնում է սպիտակ գույնի փոշի՝ դեղնավուն երանգով, որը լուծվում է ջրում և թթու միջավայրի հանդեպ դիմացկուն չէ:

Դեղամիջոցը բաց է թողնվում միանվազ օգտագործման ձևով՝ երկուսից փասը մեղվաղնպահիչների վե-

րամշակման համար: Ախտահարող հակավիրուսային ազդեցությունը կայանում է նրանում, որ դեղամիջոցում պարունակվող էնդոգլյուկինը հիդրոլիզի է ենթարկում վիրուսային նուկլեինային թթուն՝ ՌՆԹ՝ արգելք հանդիսանալով վիրուսի զարգացման համար: Այն օգտագործվում է ցողարկման միջոցով՝ նախապես պարարտանյութով աշխարհային լուծույթ՝ հետևյալ կերպ. սրվակի պարունակությունը լուծում են 100 մլ եռացրած և հովացրած ջրում, որից հետո ավելացնում 0.1 գ մագնեզիումի քլորիդ:

Բուժիչ և կանխարգելիչ նպատակով էնդոգլյուկինն օգտագործում են 3-5 անգամ՝ 7-10 օր ընդմիջումով, իսկ մեղվաղնպահիչների զարգացումը խթանելու նպատակով՝ ընտանիքները վերամշակում են 3 անգամ:

Փեթակները մշակում են գարնան, ամռան ընթացքում, առավոտյան և երեկոյան, ոչ պակաս 14 աստիճան ջերմաստիճանի պայմաններում: Էնդոգլյուկինը կարելի է օգտագործել հիվանդ մեղուների վիճակը թեթևացնելու նպատակով՝ մինչև ձմեռանոց տեղափոխելը: Այս դեպքում յուրաքանչյուր փեթակ ցողարկում են 2-3 վայրկյանը մեկ՝ օգտագործելով 4-5 մլ բուժիչ լուծույթ՝ 500 մլ ակտիվությամբ:

Հիվանդության առկայության դեպքում, փեթակներն ու շրջանակները մեխանիկական մաքրումից հետո ախտահանում են հետևյալ ախտահանիչ նյութերով՝ 4% ջրածնի պերօքսիդով, 2% կալցիումի հիպոքլորիդով, 5% նիտրատով, 1% ֆորմալդեհիդով՝ 3 ժամ ընդմիջմամբ: Մեղրահացերի ախտահանման համար օգտագործում են պերօքսիդ և ֆորմալին՝ վերը նշված խտությամբ և նույն ընդմիջումով: Մեղրամուկը հալեցնում են ջրային բաղնիքում՝ 70 աստիճանի պայմաններում՝ 70 րոպե կամ ավտոկլավում՝ 111 աստիճանի, 0.5 Մժ ճնշման պայմաններում՝ 30 րոպե փակությամբ:

Ռ. Շառուկյան
«Մուլտի-Ագրո» ՊԱԿ գլխավոր տնօրեն
Գ. Պետրոսյան
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Համայնքային

Գայլերի հարձակումներ

Վերջերս Շիրակի մարզում հաճախացել են մարզի փարբեր փարածաշրջանների գյուղերի վրա կատարված գայլերի հարձակումները:

Մասնավորապես՝ գայլերի հարձակման թիրախ է դարձել Ամասիայի տարածաշրջանի Բյուրակն համայնքը, ուր սոված գիշատիչները հոշոտել են գյուղի շներին: Նշենք նաև, որ գայլերի հարձակման դեպք է գրանցվել նաև Ախուրյանի տարածաշրջանի Մարմաշեն համայնքում:

Ստեղծվելու է կաթի մթերման կետ

Վերջերս Շիրակի մարզի Ամասիայի փարածաշրջանի սահմանամերձ՝ Արեգնադեմ, Ողջի, Գեղաշեն, Բյուրակն և Մեղրաշար համայնքներում գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահեր» ՀԿ-ի և Ավստրիական զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել է մի հեծարարժեքի ծրագիր՝ ֆերմերների համար ստեղծել հավելյալ եկամտի աղբյուր՝ հիմնելով կաթի մթերմամբ զբաղվող կոոպերատիվ և օժանդակել գյուղաբնակ կանանց ներգրավվածությանը համայնքներում առկա գյուղատնտեսական ու բնապահպանական խնդիրների լուծման գործում:

Ի դեպ, նմանատիպ ծրագիր իրականացվել է նաև Վրաստանի՝ Ռատնանի, Ռաչիստբանի, Քվեշի, Դիսվեյի, Բալիչի, Տանձիայի և Քվեմո Քարտլի տարածաշրջանի Ակաուրտա գյուղերում:

Նշված համայնքներում ստեղծվել են կանանց խորհուրդներ, անցկացվել սեմինարներ, որից հետո որոշվել է, որ ընտրված առավել ակտիվ համայնքներում՝ Արեգնադեմ, Բյուրակն, Ողջի, համայնքների աջակցությամբ ու ներդրմամբ, պետք է ստեղծվեն կաթի մթերման և վերամշակման կետեր, որտեղ ներգրավվելու են ընտրված համայնքների անդամ կանայք:

Հավելենք, որ Ավստրիական զարգացման հիմնադրամի աջակցությամբ, կանանց խորհուրդների անդամները մասնակցելու են Վրաստանում կազմակերպվող հատուկ վերապատրաստման դասընթացներին:

Նորայր Մկրտչյան

Շիրակի ԳԱՄԿ-ի անասնաբուծության գծով մասնագետ

ԾՐԱԳԻՐ

Տեղական տնտեսական զարգացումը համայնքներում

ԱՄՆ ԱԶԳ-ի ֆինանսավորմամբ, համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում, Բագրատաշեն, Դեղձավան, Դեբեդավան և Պողովան համայնքներում Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի և գործընկեր կազմակերպությունների փորձագետները ներկայացրել են տեղական տնտեսական զարգացման գործընթացի վերլուծությունների արդյունքները, որն իրականացրել են «Մրցակցային առավելությունների գնահատում» (PACA) մեթոդաբանությամբ: Համայնքներում PACA գործընթացը սկսվել է 2014 թ.-ի հունվարին:

Անցած մեկուկես ամսվա ընթացքում բացահայտվել են համայնքների հիմնական մրցակցային առավելություններն ու որոշվել տնտեսության առաջատար ծյուղերը, որի հիման վրա, առաջարկվել են տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Այնուհետև Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի փորձագետ Արտակ Դադոյանը և USAID/PRP ծրագրի իրականացման գործընկեր Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի տնօրեն Արտյոմ Գրիգորյանը ներկայացրել են վերլուծության արդյունքները՝ ըստ համայնքների: «Համայնքների տնտեսությունների մրցակցային առավելությունների հիմքում ընկած է նրանց տնտեսության ուժը: Կարևոր մրցակցային առավելություն է համարվել այն, որ համայնքները գտնվում են Հայաստանի ամենացածր վայրում՝ ծովի մակարդակից 340 մ բարձրության վրա: Բարենպաստ և մերձարևադարձային կլիման, մեղմ ձմեռը ևս համարվել են մրցակցային առավելություն»,- նշել է փորձագետը: Այլ մրցակցային առավելություն են նաև բերքի հասունացման կարճ ժամանակահատվածները և Բագրատաշենի մաքսակետին և Երևան – Թբիլիսի ավտոմայրուղուն մոտ լինելը: Դեբեդ գետի

ափին գտնվող համայնքներին հնարավորություն է տրվում օգտվել ոռոգման ջրի անսպառ աղբյուրից: Բացի այդ, Բագրատաշեն, Դեղձավան, Դեբեդավան և Պողովան համայնքներում ածու են բույսերի հազվադեպ տեսակներ՝ ծիթապտուղ, կիվի, արքայանարինջ, պիստակ: Համայնքների տնտեսության հիմնական ծյուղերը վերլուծելիս, հաշվի է առնվել, թե որտեղ է կենտրոնացած աշխատող բնակչության մեծամասնությունը և որտեղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ծյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ծյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ծյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ծյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ծյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ: Փորձագետները և տեղական թիմը, տեղական մրցակցային առավելությունների հիման վրա, առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ծյուղերը: Ռազմավարական ծյուղ են համարվել այգեգործությունը, արևածաղկի արտադրությունը, անասնաբուծությունը, գյուղմթերքի հետագա վերամշակումն ու իրացումը: Ամփոփելով փորձագետը նշեց, որ համայնքներն, իրենց մրցակցային առավելություններով, ինքնատիպ են: Տնտեսությունը հիմնականում զարգանում է հիմնվելով տեղական տնտեսական առավելությունների վրա: Մարդիկ ունեն գործարարի բարձր հատկանիշներ, նախաձեռնող են և աշխատասեր: Տնտեսության մեջ, ըստ մասնագետների, գյուղատնտեսության առաջատար ծյուղերում աշխատանքի արտադրողականության վերլուծությունը ցույց է տվել, որ ամենաբարձր արժեքը ստեղծվում է այգեգործության ոլորտում, որը գնալով աճում ու զարգացում է ապահովվում:

Լիանա Շախնազարյան

ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐ

ՀՐԱՇՔ ԲՈՒՐԳԸ

Նյու-Յորքի Կոլումբիայի համալսարանի պրոֆեսորներ՝ Էրիկ Էլլինգսենը և Դիքսոն Դեսպոնդերը իրենց մի շարք հեղափոխիչ գաղափարն իրականացնելու են մոտեցել. իրենց նախագծած և այժմ կառուցվող Pyramid Farm-ի գաղափարը, գիտնականների համոզմամբ, շուրջով փարածվելու է աշխարհով մեկ և, մինչև 2060 թվականի գալը, երբ երկրագնդի բնակչության զգալի մասը՝ մոտ 3 միլիարդ մարդ, կսկսի լուրջ խնդիրներ ունենալ սննդամթերքով ապահովման հարցում:

Թափոնների վերամշակումով: Իսկ այդ բոլորի համար էներգիա կապահովեն ոչ միայն ֆոտոէլեկտրիկ վահանակներն ու քամու էներգիայի կուրակիչները, այլև՝ էներգիայի



Կառուցվող բուրգի հիմքում ընկած է սննդային բուրգի գաղափարն՝ իր բազային և օժանդակ սննդամթերքի բաշխման սկզբունքներով: Այն, փաստորեն, իրենից ներկայացնում է գլոբալ պարենային խնդիրների լուծման միանգամայն ինքնաբավ էկո-համակարգ, որն ընդգրկում է բոլոր գործընթացները՝ սկսած էկոլոգիապես մաքուր սննդի արտադրությունից (բանջարեղեն, միրգ, հացահատիկ, ձուկ և այլն)՝ վերջացած ներքին

այնպիսի «կանաչ» աղբյուր, ինչպիսին կոյուղաջրերի ջերմությունն է:

Ըստ հեղինակների հաշվարկների, բնական ու ագրարային ցենոզների և ջրի՝ համապատասխանաբար, միայն 10 և 5 փոկոսն են օգտագործվելու բուրգային համակարգերում՝ մարդկությանը հեծարող սովորեցնելով հսկայական փարածություններ և էկոհամակարգեր ավերելուց:

Բուրգային համակարգն ինքնին արդյունավետ է այն առումով, որ արդյունավետ է օգտագործում նաև երկրագնդի մակերեսը: Բայց այսօրեղ մի հանգամանք էլ կա, որ գուցե լույս սփռի նաև եգիպտական բուրգերի առաջմ չբացահայտված գաղափարների վրա. արդեն մոտ երկու փասնամյակ է, ինչ ռուս ակադեմիկոս Ա. Գոլոզը փարոսի նակ երևույթների ակնապես է լինում իր նախագծած ու կառուցած բուրգերում, որտեղ հեղափոխիչ փորձեր է անցկացնում, այդ թվում՝ գյուղատնտեսությանը վերաբերող: Օրինակ՝ դրանցում բույսերն ավելի արագ են աճում, չեն հիվանդանում, ավելի բարձր բերք են փախիս, սածիլները դիմանում են գարնանային ցրտահարություններին (կարճաժամկետ՝ մինչև -16°C) և այդպեղ աշխատող մարդիկ գործնականում չեն հոգնում ողջ աշխատանքային օրվա ընթացքում: Այնպես որ՝ Pyramid Farm ծրագիրն իսկապես հեռանկարային ծրագիր է:

Վ Զ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼԸ ՍԿՍՎԱԾ Է



Օրերս Գեղարքունիքի ԳԱՄԿ-ում հանդիպում էր կազմակերպվել գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց հետ՝ ազդարարելու մրցակցային դրամաշնորհային ծրագրերի մեկնարկի հերթական փուլը:

«Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի» ներայացուցիչները ներկայեցրին բացառաբերական ծրագրի իրականացման նպատակներն ու խնդիրները՝ նշելով, որ ֆերմերների, կոոպերատիվների, բիզնես-խմբերի և այլ անձանց կողմից ներկայացվող ծրագրերը պետք է ընդգրկեն այնպիսի նոր տեխնոլոգիաներ, որոնց կիրառումը կխթանի Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում նոր արտադրարտեսակների, մեխանիզմների ստեղծմանն ու փարածմանը: Ծրագրերի իրականացման պատասխանատուները ներկայացրեցին նաև հայրերի պատրաստման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունն ու գործընթացի հետ կապված այլ մանրամասներ:

Մրցակցային դրամաշնորհային ծրագրերի նախորդ փուլում Գեղարքունիքի մարզում ներկայացված հայրերից հաղթող էր ճանաչվել սագաբուծական ֆերմայի հիմնման ծրագիրը: Մրցույթի այս փուլի հայրերն ընդունվում են մինչև 2014թ. ապրիլի 7-ը:

Տ. Հակոբյան
Գեղարքունիքի ԳԱՄԿ

ԶԱՏԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՍԿՍՎԵԼ Է ՄԵԾ ՊԱՅԲԸ

Բարեկենդանին շնորհում է Մեծ Պսառ, որն Իբրևաձերթան, Իբրևաձուձերթան, Եղեշարոհայան, Ժոթպալոհայան յուձարթայան շրջան է: Այս ՏԱՐԵԿԱՆ ՊՍԱՐԵՐԻՅ ԸՄԵՆԱԵՐԿԱՐՆ Է:

Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք: Այդ ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլև շարք սովորություններից: Պահքի ընթացքում ցանկալի է նաև, որ հավաքացյալը հաճախ եկեղեցի և Աստուծոց իր մեղքերին թողություն խնդրի: Հոգևոր իմաստով՝ պահքը միաված է մարմնական և հոգևոր ներդաշնակությանը, զղջման, ինքնազոհության միջոցով երկրային մեղքերից ձերբազարդելուն:



Եկեղեցին Մեծ Պահքը կապում է Հիսուսի հետ, ով համաձայն Ավետարանի, քառասուն օր արթն անապատում, մարդկանցից հեռու, որպեսզի կարողանա ապաշխարել, խորհել: Մեծ Պահքի օրերին փակվում են եկեղեցու դռներն ու հավաքացյալներն աղոթում են դռան առջև: Դա բացարձակ է նրանով, որ, համաձայն քրիստոնեական հավատքի, մարդն իր մեղքերի պարճառով արքայազնից դրախտից, և պահուց օրերին եկեղեցի չմտնելն այդ խորհուրդն ունի: Այս օրերին, բացի շաբաթ և կիրակի օրերից, Ավետարան չեն կարդում, պարարագ չի մատուցվում չեն թույլատրվում նաև պանակադրություն, զվարճախաղեր, ուրախ արարողություններ:



Պահի բաղադրատոմսեր

Պարրասպեք շոգեխաշած բանջարեղեն բրնձով, սոխով կոլոլեպ՝ սնկի սոուսով, փոմարով ոսպ՝ հեփոկալ բաղադրատոմսերով: Կարելի է մատուցել նույնիսկ ամենօրյա սեղաններին:

Չագար՝ 400 գրամ, կարմիր լոբի՝ 500 գրամ, բրինձ՝ 2 թեյի բաժակ, բուսայուղ, սխորր, սև պղպեղ: Բրինձը բուսայուղով բովել, մինչև թափանցիկ դառնա: Վրան աղաջուր լցնել, դնել մարմանդ կրակին: Ուռոջ կամ լոբին, Չագարը (կարելի է նաև այլ բանջարեղեն, օրինակ՝ դդմիկ, ծաղկակաղամբ և այլն) փապակել բուսայուղի մեջ: Վերջում ավելացնել սխորր: Պարրասպի բրնձի վրա սև պղպեղ անել, լցնել մատուցվող ափսեի մեջ, կարելի է օղակաձև դնել, մեջտեղում փոս թողնել: Մեջտեղում լցնել բանջարեղենի խառնուրդը: Կարելի է խառնել, այդպես մատուցել:

Սոխ՝ 5 հապ, պահածոյացված եգիպտացորեն՝ 450 գրամ, ալյուր՝ 1 թեյի բաժակ, շամպինիոն՝ 400 գրամ, կանաչի, կանաչ սոխ, բուսայուղ, աղ: Սոխը մաքրել, մանր կտրատել, ավելացնել եգիպտացորենին՝ իր հյութի հետ, աղ անել: Կարելի է ավելացնել մի քիչ ջուր, ալյուր և խառնել: Սպասվում է պինդ խմոր: Թավան փաքացնել, գրալով խմորից վերցնել, կարմրացնել ձեթի մեջ: Սուկը մի քիչ ջրով փապակել սոխի հետ՝ մոտ 20 րոպե, աղ, պղպեղ անել, հարիչով հարել, ավելացնել կանաչ սոխ և մատուցել:

Ոսպ՝ 2 թեյի բաժակ, Չագար՝ 1 հապ, սոխ՝ 1 գլուխ, սխորր՝ 2 պճեղ, փոմարի մածուկ՝ 2 ճաշի գդալ, կանաչի, բուսայուղ, աղ, սև պղպեղ: Ոսպը թրջել մի քանի ժամ, ապա եփել: Սոխն ու Չագարը մաքրել, կտրատել և բուսայուղի մեջ մի քանի րոպե փապակել: Ավելացնել մանրացրած սխորր, աղ, պղպեղ, իսկ վերջում խառնել փոմարը: Խառնելով եփել մի քանի րոպե: Կարելի է մի քիչ բանջարեղենի արգանակ կամ ոսպի ջրից ավելացնել: Վերջում՝ կտրատած կանաչի շաղ փալ վրան: Կարելի է մատուցել ինչպես փաք, այնպես էլ սառը:

ԴԵՂԱԲՈՒՅՍ

Ղանձիլ կամ վայրի սխորր

Հայկական փարանուններն են՝ արջասխորր, խալիար, սխորուկ, վայրի սխորր:



Դեղաբույսի նկարագրությունը: Սոխագիցների ընտանիքին պատկանող, 20-50 սմ բարձրությամբ, ուղղաձիգ ցողունով, սխորի բնորոշ հոտով բազմամյա խոտաբույս է: Ունի ցանցանման, երկարավուն սոխարմատ, նշտարած տերևներ, մանր, սպիտակ կանաչավուն ծաղիկներ: Պտուղը սև սերմերով հատիկ է: Մեր հանրապետությունում տարածված տեսակներից՝ արջասխորրը և հաղթականը, հարուստ են ֆիտոնցիդներով և ունեն բուժական նշանակություն: Ղանձիլը հանդիպում է մեր հանրապետության բարձրալեռնային, անտառային և անտառատափաստանային գոտիների խոտհարքներում, արոտավայրերում, խամահողերում, հիմնականում՝ Վանաձորի, Դիլիջանի և Իջևանի տարածաշրջաններում: Ցեղի «ալլիում» անունը կելտական ծագում ունի, որը նշանակում է կծու, իսկ «ուրսինուսը»՝ արջ, այն նկատառումով, որ ղանձիլը հաճախ աճում է արջերի բնակատեղիներում: Քիմիական բաղադրությունը: Ամբողջ բույսը պարունակում է վիտամիններ, կարոտին, գլիկոզիդ ալանին, շաքար, սխորի բնորոշ հոտով էթերայուղ, լուծվող հանքային նյութեր և այլն:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով կիրառվում է ղանձիլի ամբողջ վերգետնյա մասը՝ սոխարմատի հետ միասին: Այն հավաքում են մայիսի կեսերից, երբ դեղաբույսը սկսում է կոկոնակալվել: Դեռևս Հին Հռոմում ղանձիլը համարվել է ստամոքսաաղիքային տրակտը մաքրող միջոց: Ներկայումս էլ ժողովրդական բժշկության մեջ դեղաբույսը համարվում է «արյունը մաքրող» միջոց և օգտագործվում մաշկային մի շարք ախտահարումների ժամանակ: Հայկական ժողովրդական բժշկության մեջ ղանձիլն օգտագործվում է հիմնականում սխորածակը լավացնելու, օրգանիզմը կազդուրելու և ուժերը վերականգնելու նպատակով:

Բույսից ստանում են ուրսալ և ուրսալին դեղամիջոցները: Ուրսալը բույսի սոխարմատի և արմատների էթերային մզվածքն է, քիչ պոտոր, դեղնականաչավուն տեսքով, սխորի բնորոշ հոտով: Ղանձիլը բնակչության լայն խավերին հանրածանոթ ուտելի բույս է. ուտում են սոխարմատը, տերևներն ու ցողունը՝ հում, եփած, թթու դրված և մարինադի ձևով: Վաղ գարնան ամիսներին բույսը կարող է ծառայել որպես վիտամինային աղբյուր, իսկ որպես համեմունք՝ ավելացվում է մսով ճաշերին: Անգլիայում թթու ղանձիլը համարվում է արտահանման մեծ պահանջարկի մթերք: Սիբիրում նրանից պատրաստում են շի, թխում կարկանդակ: Շնորհիվ ֆիտոնցիդների՝ ղանձիլը կանխում է մսի նեխումը, ոչնչացնում կարտոֆիլի, եգիպտացորենի և խաղողի որոշ հիվանդությունների հարուցիչներին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմը, Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնների աշխատակիցները խորապես ցավակցում են Լոռու ԳԱՄԿ-ի տնօրեն Մանվել Գրիգորյանին՝ սիրելի հոր՝ ՄԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ մահվան կապակցությամբ:

Advertisement for agricultural products. Title: ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԱԳՐՈՒՐԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈՎԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի 2014թ. բաժանորդագրությունը. Includes a table of subscription rates for different regions and a list of products like flour, oil, and sugar.

Footer information for Agronews. Includes logo, contact details (phone, email, website), and address: Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80. E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am